B.J. GALSTYAN

WILLIAM SAROYAN ABOUT RUSSIAN WRITERS

The literary views of W. Saroyan of Russian literature and Russian writers are considered.

Keywords: Russian literature, national and universal unity, psychological depth, artistic way of thinking, individuality.

ՀՏԴ 001.4:378(C76.5)

Շ.Բ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ

(Գյումրի)

Ներկայացվում է տերմինային հապավումների կազմության առանձնահատկությունների գործնական ուսուցումը՝ համաձայն տեխնիկական բուհի «Հայոց լեզու և գրականություն» դասընթացի առարկայական ծրագրի:

Առանցքային բառեր. տերմինային հապավումներ, ուսուցում, քննարկում, փոխառյալ հապավումներ, կառուցվածքային վերլուծություն, բառաստեղծումներ:

Ներածություն: ՀՀ-ում տնտեսական, քաղաքական, իրավական, կրթամշակութային և մեդիա դաշտում տեղի ունեցող ամենօրյա փոփոխությունների հետևանքով առաջ են գալիս նորանոր բառաստեղծումներ, տերմիններ: Տերմինի մասին առաջին կուրսի ուսանողը որոշակի գաղափար ունի դեռևս 10-րդ դասարանում հայոց լեզվի դասընթացի ուսումնասիրվող նյութից: Սակայն տերմինի մասին լայն տեղեկատվություն տրվում է արդեն բուհի առաջին (ուսումնական պլանների փոփոխման արդյուքում՝ այսօր նաև II) կուրսում հայոց լեզվի առարկայական ծրագրին համապատասխան, որն ապահովված է գրականությամբ [1,2]: Հիմնական աղբյուր հանդիսացող դասագրքում [3] ուսուցանվում են տերմինի սահմանումը, բառի և տերմինի միջև եղած նույնություններն ու տարբերությունները, իմաստաբանությունը, կառուցվածքը, տերմինային համակարգերը, տերմինային կապակցությունները: «Տերմինային կապակցություններ» ենթաթեմայի բաղկացուցիչ մասն են կազմում դրանց հենքով ձևավորվող տերմինային հապավումները:

Վերջին շրջանում տնտեսական, քաղաքական, կրթամշակությանին, իրավական և մեդիա դաշտում սրաթռիչ զարգացող տերմինային հապավումների

մասին հիշատակումն անհրաժեշտ է այսօրվա ուսանողին, որը քաջածանոթ պիտի լինի տեխնիկական և ճշգրիտ գիտությունների նշանային լեզվում օրեցօր ստեղծվող տերմիններին և տերմինային հապավումներին:

Հապավումների ուսուցման գործընթացը: Հապավումները, հապավական բարդությունները ներկայացնելիս պետք է հիշեցնել, որ դրանք առաջացել են համառոտագրությունների հիման վրա, և սկզբնապես ներկայացվել է դրանց մի տեսակը: Հետագայում հապավումները հեռացել են կապերի հետ գործածությունից ու համառոտագրություններից և դարձել բարդ բառերի կազմության եղանակներից մեկը:

Համառոտագրությունները շարունակել են ինքնուրույնաբար հանդես գալ, որոնցով նոր բառեր չեն ստեղծվում, իսկ հապավումներն ունեցել են զարգացման լայն ասպարեզ՝ սկսած անցյալ դարի 20-ական թթ.-ից և հատկապես վերջին շրջանում: Հապավումներից առավել տարածված են տառային, վանկային, վանկաբառային տեսակները:

1. Տառային - բառակապակցությունների առաջին տառերը: Սովորողներին պետք է հիշեցնել այս տեսակի հապավումների մեծատառով և փոքրատառով գրությունները, ինչպես օրինակ՝ ՀՀ, ՄԱԿ, ՍԴ, ՍԻ, ՀԱՊՀ , ԳՄ, ՊԵԿ, ԿԳՄՍ և բուհ, զագս, օ.գ.գ. և այլն: Բազում են տառային հապավումները, և այս կանոնին համապատասխան՝ կարելի է բերել առավել թարմ օրինակներ մերօրյա տեխնիկական բուհը ներկայացնող կրթական, կառավարման համակարգի, ֆակուլտետների, ամբիոնների, մասնագիտությունների և այլ ոլորտներից: Օրինակներ՝ ՀԱՓԿ-Համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության կենտրոն, ԲՏԱ-Բարձրագույն տեխնոլոգիաների արդյունաբերություն, ԿԾՈՒԿ-Կարիերայի ուսանողական ծառայությունների կենտրոն, ՔՇԿ-Քաղաքաշինության կոմիտե, ՏԹԱ– Տեքստիլ և թեթև արդյունաբերություն, ՍԱՏՄ-Սպառողների ազգային տնտեսական միություն, ԱԱՀ-Ավելացված արժեքի հարկ, ԿՏԱԿ-Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, ՀՆԱ-Համախառն ներքին արդյունք, ԲԸՏՄ-Բնապահպանության և ընդերքի տնտեսական միություն, ՏՏ-Տեղեկատվական տեխնոլոգիաներ, ԱՔՇԵԿՆ- Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում, ՄՈՒԲ-Մինչբուհական ուսուցման բաժանմունք, ԹԳՀԳ-Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն, ԿԶՆԱԿ-Կրթության զարգացման նորարարությունների ազգային կենտրոն, ՄԿԱԳՀ – Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող, ՄԿԱԳՀ – Մանկավարժական կրթության աջակցությունների գործունեության համակարգ, ՏՄԱԿ-Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն:

2. Վանկային, վանկաբառային, վանկատառային՝ կազմված վանկերից, տառերից, բառմասնիկներից՝ հապավման տեսքով: Օրինակ՝ գիտխորհուրդ, էլցանց, Հայջրմուղ, տեխգործ, ՏՇ գործոն, ԿԳՄՍ նախարարություն, Շինպլազա, «Հայանտառ» ՊՈԱԿ, շրջհարկ, «ՏԳ և Ե» բաժին-Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների, «ՏՀԱ» բաժին-Տեղեկատվական համակարգերի սպասարկման, «ՈՒՄ» բաժին-Ուսումնամեթոդական, «ՀԱևՏ» ամբիոն- Հումանիտար առարկաների և Տնտեսագիտության, «ԻՄ» ամբիոն-Ինժեներական մասնագիտությունների, «ԿՄևՏՏ» ամբիոն-Կիրառական մաթեմատիկայի և Տեղեկատվական տեխնոլոգիաների:

3. Գործուն են տերմինային հապավումներ՝ մեկից ավելի տարբերակային դրսևորումներով: Օրինակներ՝ ՀԳ- 1. Համակարգչային գրաֆիկա, 2. Համակարգչային գիտություն, ՀՈՒԽ- 1.Համակարգչային ուսուցողական խաղեր, 2. Հանրապետական ուսանողական կենտրոն, ՀԱՍՇ /1-Հայաստանի ազգային սպառողների շահեր, 2-Հայաստանի ազգային սկաուտական շարժում: Սրա տարբերակներից մեկն էլ Հայ մարմնակրթական ընդհանուր միությունն է՝ ՀՄԸՄ/, ՄԱԿ-1. Միավորված ազգերի կազմակերպություն, 2. Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն:

4. Փոխառյալ տերմինների հապավական բարդություններ – ՖԻՖԱ, ՅՈՒՆԵՍԿՕ, ԲԻԲԻՍԻ, ՍԻԲԻԷՆ, ՈՒԵՖԱ, ՏԱՍՍ, Արմենպրես և այլն: Այս շարքը լրացնող օրինակներ կարելի է ինքնուրույն աշխատանքի տեսքով հանձնարարել ուսանողներին:

Տերմինային հապավումների կառուցվածքային վերլուծության առումով նշենք, որ կան հիմնաբառեր, որոնց շուրջ կարող ենք կազմել տալ մասնագիտական նորակազմություններ: Օր.՝ հաքերի հայերեն համարժեքը՝ հեն - ավազակ, այստեղից՝ հայտնի ծովահեն բառը: ՏՏ ոլորտում կարող են կազմվել համակարգչահեն, ցանցահեն տերմինները:

Գործնական վարժությունների բաժնում կարելի է հանձնարարել մայր բուհի և Գյումրու մասնաճյուղում գործող ֆակուլտետների, ամբիոնների ու մասնագիտությունների հապավումների կազմումը:

Եզրակացություն: Տերմինային կապակցությունների համածիրում տերմինային հապավումների ուսուցումը միտված է տեխնիկական բուհում նյութի դասավանդմանը, ուսանողների կողմից թեմայի ընկալմանը, նրանց բանավոր և գրավոր գիտական խոսքի զարգացմանը: Աշխատանքը կարող է զարգացնել ուսանողների գրավոր-բանավոր գիտական խոսք կառուցելու հմտությունները՝

տերմինային հապավումների թարմացված օրինակների ուսուցման տեսքով և տեխնիկական բուհի համապատասխան ոլորտներում տերմինային կապակցությունների, նոր բառաստեղծումների, հապավական բարդությունների կառուցվածքային վերլուծությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պետրոսյան Հ.Ց., Մարտիրոսյան Ա.Թ.** Գործարար և գիտական հայոց լեզու. Խոսքի մշակույթի հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ.- Երևան: Ճարտարագետ, 2015.- 284 էջ:
2. **Պետրոսյան Հ.Ց., Մարտիրոսյան Ա.Թ., Բարսեղյան Շ.Բ.** Հայոց լեզու: Գործնական աշխատանքների ձեռնարկ.- Երևան: Ճարտարագետ, 2017.- 226 էջ:
3. **Պետրոսյան Հ.Ց.** Տերմինագիտության հիմունքներ: Դասագիրք.- Երևան, 2010.- 303 էջ:

Ш.Б. БАРСЕГЯН

ПРАКТИЧЕСКОЕ ОБУЧЕНИЕ ТЕРМИНОЛОГИЧЕСКИМ АББРЕВИАТУРАМ В ТЕХНИЧЕСКОМ ВУЗЕ

Представлено практическое обучение особенностям построения терминологических сокращений в соответствии с программой предмета курса "Армянский язык и литература" технического вуза.

Ключевые слова: аббревиатура терминов, обучение, обсуждение, заимствованные сокращения, структурный анализ, словообразование.

SH.B. BARSEGHYAN

PRACTICAL TEACHING OF TERM ABBREVIATIONS AT AN ENGINNERING UNIVERSITY

The article provides practical training on the specifics of construction of terminological abbreviations with updated examples in the subject curriculum of the course "Armenian Language and Literature" of the Technical University.

Keywords: terminological abbreviations, training, discussion, borrowings, structural analysis of word-formation.